ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Աջափնյակի տարածքային բաժինը /այսուհետ՝ ՍԱՏԲ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Աջափնյակ վարչական շրջանի համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց / այսուհետև Կողմեր/ հրավիրվում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետև Խորհուրդ /:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի հ. 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է Խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո երկու տարի ժամկետով:

Կողմերը Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները / հայտերը/ կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Աջափնյակի տարածքային բաժին մինչև 2016թ. հուլիսի 6-ը / հասցեն՝ քաղ. Երևան, Բաշինջաղյան 100, հեռախոս 011.518.061/;

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են՝

ա/ սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը

բ/ սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում , որը տրամադրվում է սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
սոցիալական աջակցության Աջափնյակի տարածքային բաժին